ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

2009 թվականի գիտական և գիտակազմակերպական ընդհանուր արդյունքներին էր նվիրված ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, *Հայ եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ* Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, *ՀՀ կառավարության անդամներ, Ազգային ժողովի պատգամավորներ, բարձրաստիճան հյուրեր, հանրապետության բուհերի ռեկտորներ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ:*

Ժողովը մեկնարկեց ապրիլի 21-ին ԳԱԱ գիտական բաժանմունքների տարվա արդյունքների ամփոփումով: Շահագրգիռ քննարկումներին մասնակցեցին նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամները:

Ապրիլի 23-ին ԳԱԱ նիստերի դահլիճում գումարվեց տարեկան ընդհանուր ժողովը: Բացելով այն՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը *խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել հաշվետու տարում կյանքից հեռացած ակադեմիկոսներ Արմեն Թախտաջյանի, Ֆադեյ Սարգսյանի, Միդա Ավետիսյանի և թղթակից անդամ Արամ Քալանթարյանի հիշատակը:*

Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ Կճոյանը ժողովի մասնակիցներին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի *հայրապետական օրհնությունը և մաղթանքները՝ ի փառս հայ գիտության զարգացման և ի հաջողություն ժողովի աշխատանքների:*

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 2009 թվականի գիտական գործունեության արդյունքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Գիտությունների ազգային ակադեմայի գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար Արամ Շահինյանը:

Այնուհետև ծավալվեց մտքերի աշխույժ և շահագրգիռ փոխանակություն: Ելույթ ունեցան Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրեն Վիգեն Թոփուզյանը, *ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ* Սերգեյ Աղյանը, *ԳԱԱ ակադեմիկոս* Ռոբերտ Աթոյանը, *Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն* Վլադիմիր Հարությունյանը, *ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը, ակադեմիկոս* Կոնստանդին Ղարագյոզյանը, *ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի*

ներկայացուցիչ Լիլիթ Սահակյանը, *ԳԱԱ արտասահմանյան անդամներ* Ռուբեն Մելքոնյանը *և* Սամվել Գրիգորյանը*:*

Ժողովում ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, *որը շնորհակալություն հայտնեց ԳԱԱ-ի նախագահությանը՝ կառավարությանը սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիմքում ընկած հիմնադրույթներն ուշադրության կենտրոնում պահելու համար:*

– Ցանկացած կառավարության գերնպատակն է ստեղծել մրցունակ տնտեսություն: Իսկ մրցունակ տնտեսություն ասելով՝ ժամանակակից աշխարհում հասկանում են գիտելիքի վրա հիմնված տնտեսություն: Ավելին, գիտելիքի վրա հիմնված տնտեսություն հնարավոր չէ ստեղծել, եթե հասարակությունը հիմնված չէ գիտելիքի վրա: Սա է Հայաստանի Հանրապետության հեռանկարային և երկարաժամկետ զարգացման տեսլականը: Մենք այլընտրանք չունենք, քան զարգացնել գիտությունը և դրա վրա հիմնված տնտեսությունը,– ասաց Տիգրան Սարգսյանը:

Ընդմիջումից հետո նոր, գերծանր 117-րդ տարրի հայտնագործության մասին զեկուցումով հանդես եկավ այդ հայտնագործության հեղինակներից Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանը*:*

«Գիտություն», 2010, ապրիլ, № 4